

փետրուարը . Շանկառնիէ զօրավարը մայիսի մէջ . Շարրոն զօրավարը սեպտեմբերի մէջ :

Ընդդիմակալութեան գլխաւորն էր 1831^ւ ի վեր Ապտ-էլ-Քատէր . 1837^ւ մայիսի 30^ի Դաֆնայի դաշնագրութեամբ կը հաստատուէր Գաղղիոյ գերագահ իշխանութիւնը , բայց կը ճանշցուէր նաև Էմիրին իշխանութիւնը Օրանի՝ Դիդէրի և Ալճէրի նահանգաց վրայ , ՚ի բաց առեալ Օրան , Արգէվ , Մազակրան , Մոսդականէմ , Ալճէր , Պլիտահ և Քոլէահ , Սահէլ ու Մէդինա քաղաքները : Կոստանդինայի նահանգը՝ քաղաքին առմանէն ետքն իսկ , 1837^ւ ապրիլի 3^ի , երկու տարի վերջը ընկճեցաւ . իսկ Բորդ-տը-Ֆէրի արշաւանքը Վալէ մարածախտին և Օոլէանի գրափակին ձեռքով այս բանս ՚ի գլուխ կը հանուէր 1838^ւ : Ապտ-էլ-Քատէր կը միացընէր հիւսիսային ամենայն ցեղերը , և 1839^ւ նոյեմբերի մէջ դաշինքը հատանելով , յանկարծակի Գաղղիացւոց վրայ յարձակեցաւ , և Արաբացիք եկան նոյն իսկ Ալճէրի դռներուն առջև բանակեցան . 1840^ւ Գաղղիա այս դժբաղգութիւնը դարմանելու աշխատեցաւ , և գարնան ժամանակ հանդիպեցաւ Մազակրանի դիւցազնական դրուագը : Երբ Պիւժոյ զօրավարն հասաւ՝ փոխեց պաշտպանողական դրութիւնը . իր բազզիաները ոչ երբեք հանդիսատ թողին արաբացւոց ցեղերը , և Էմիրի վրայ ըրած մեծամեծ արշաւանքն անոր համբաւը նուազեցուց : Պիւժոյ մայիսի 30^ի առաւ զՄազպարա , յառաջնեց մինչև Մարդի սահմանագլուխը և առաւ զԴիլէմսէն 1842^ւ յունուարի 30^ի , 1844^ւ օգոստոսի 14^ի զարկաւ յաղթեց յիշի՝ Մարդի սուլդանին , մինչեւ Ժունվիլ իշխանն ՚ի ծովէ կը սմբակոծէր զԴանճէր (օգոստ . 6.) և զՄոկատոր (օգոստ . 10.) և Ապտ-էլ-Քատէրի գաշնակցութիւնը ցրուեց : Պիւժոյ զօրավարը շատ անգամ յաղթեց Էմիրին , որ Մարդի սուլդանին դէմ պատերազմելէն ետքը , Մուլուիայի մօտ Գաղղիացիներէն պատեցաւ և ան-

ձնատուր եղաւ 1847^ւ գեկտեմբերի : Իսկ Հէրպիյենն զօրավարին զՄաաշա առնելլը 1843^ւ նոյեմբերի , Սահէլի ցեղից դէմ արշաւանք մը 1850^ւ , և Լակուայի առումը 1852^ւ գեկտ . 4^ի , Ուարկլայի շէրիֆին յաղթուիլը 1853^ւ , ընդդէմ Մէպառ արշաւանքը , Դուկկուրի առնուիլը , և խոռովիչ Պու-Պակլայի մահը 1854^ւ , ընդդէմ Պէնի Մնասսէնի ճակատամարտն ՚ի Մարդի 1859^ւ և արևել . Քապիի մարտակուին 1860^ւ , Ալճէրիի մէջ հանդիպած վերջին դէպքերն են :

Իր շարտեակախ :

Ա.

Արևելեան ազգաց մէջ թորգոմեան ցեղը՝ Հայք և Թուրք՝ ամեն միւս ազգերէ աւելի սիրող են պաղատու ծառոց և այգեաց : Ամեն տուն կ'ախորժի գէթունենալ փոքր պարտէզ մը . և անոր մէջ ալ իւր սիրած տեսակէն մէկ քանի ծառ : Աւելի ցաւ կ'իմանայ գիւղական թուրքը իւր պարտէզի մէկ ծառի չորնալուն վրայ՝ քան թէ իւր կնոջ խաւարելուն վրայ : Արևելք ճանապարհող գիտնոց զրուածքներուն նայելով չկայ Ասիոյ մէջ Հայոց պէս պարտիզասէր ժողովուրդ . որք իրենց պարտէզները արբուցանելու համար ամեն հնար կարուութիւն ու ճարտարութիւն ՚ի գործ դրած են : Եւ յիրաւի , Ասիոյ Տաճկաստանին ամեն մեծ քաղաքներու ջրը ջարոլորը մեծամեծ ծառատնկութեամբ մշակուած են : Այս պարտէզները ոչ միայն իրենց համեզաճաշակ պաղով բնակչաց ախորժը կը լնուն , այլ և հեշտակի վայրք և զրօսալի ճեմելիք եղած են անոնց պարապոյ ժամերը իրենց զովագին ստուերներուն տակը անցունել տալու : Ծառի հովանուոյ տակ նըստիլ , պառակիլ , ճաշել , խաղալ , ցագենալ՝ ասիացւոյն տրուած է . այդչափ հեշտութիւն կ'իմանան այդ ծառամէր ժողովուրդները ծառոց ընկերակցութենէն : Դառ մը մեծնալէն ետքը .

թէպէտ և տանեաց վրայ մեծցած ըլլայ, թուրքը անոր ձեռք չվերցուներ. աւելի յանձկառնու որտանիքը խարխինքան թէ ծառը արմատէն քանցուի : Եթէ այսչափը սիրել է, այսչափ է ահա ասիացւոց ծառ սիրելը : Անոնց ծառ սիրելը միայն ծառը տնկելուն վրայ կեցած է . անգամ մը տնկելէն ետքը բնութեան կը թողուն, կ'ուղեն որ Աստուած աճեցունէ . կը կարծեն որ ծառերը առանց օգնականութեան և խնամուելու կրնան իրենք իրենցմէ աճիլ ու պտղաբեր ըլլալ . փոխանակ զի գիտնալու էին, որ ծառ մը չկրնար ուռճանալ, ընտիր պտուղ երեցունել և երկայնակեաց ըլլալ՝ մինչեւ օգնութիւն չգտնէ կամ՝ ի բնութենէ և կամ լինամող ձեռքէ : Բնութիւնը ծառոց կ'օգնէ կլիմայի ազդեցութեամբք, տարերաց զօրութեամբք և զետնի բաղադրիչ տարրական հիւթերով . իսկ մշակը բնութեան դործակից կ'ըլլայ՝ անոր պակասը լեցունելով, ծառին սիրած մնունզը պէտք եղածին չափ տալով, և ուր բնութիւնը կ'անկարանայ իւր ազգեցութիւնքը ներգործել՝ մշակը ինչպէս թէ միջնորդ. կեցած՝ ճամբաներ կը պատրաստէ և կը դիւրացունէ, որպէս զի բնութիւնը կարենայ իւր գործը կատարել :

Ամենիմաստ և ամենաճարտարն Աստուած բուսական արարածքը ստեղծելու ատեն անոնց գոյութեան մէջ զրերէ զօրութիւն կենսական և աճումն, և ասոնց հետ մէկտեղ մեծ կարողութիւն մ'ալ կատարելազործուելու : Մշակն է ծառերը՝ ի կատարելութիւն հասցունողը :

Եթէ տեսնենք նմանահող զետնի վրայ երկու ծառ, որ մի ևնոյն ժամանակի մէջ իրարու մօտ տնկուելով մէկը իւր առոյգ և քաջառողջ հասակին մէջ իւր բոլորչի ճիւղերով հիանալի կերպով ուռճացեր է, և միւսը ծիւրեալ և հիւանդագին, համոզուելու ենք որ եթէ երկուքը մի և նոյն կլիմայի և տարերաց ազգեցութիւնը կը լով այս աստիճան զանգանուեր են իրարմէ, 'ի հարկէ ծառոյն կամ գետնին կողմանէ ներքին

պատճառ մը կայ աճման արգելիչ . հոսէ ահա մշակին յօդնութիւն հասնելու ժամանակը :

Կտոր մը աչալուրջ եղող մշակը կրնայ դիտած ըլլալ, որ մի և նոյն բաղադրութիւն ունող գետնի վրայ ամեն տեսակ ծառ չկրնար հաւասարապէս յառաջ գալ . այլ բաղադրութիւն հողոյ կ'ուղէ տանձը, այլ գեղձը . դարձեալ՝ այլ կերպ հող և գարման կ'ուղէ այս տեսակ տանձը և այլ կերպ գարման մէկ այլ տեսակ տանձը : — Եթէ իւր դիտողութիւնը կը կտոր մըն ալ յառաջ մղէ՝ կրնայ տեսնել, որ զով և անոյշ հողերու վրայ տնկուած այգին ողջարմատ կ'ըլլայ և առատ պտուղ կուտայ, բայց ոչ այնչափ համեղ . ընդհակառակն այն այգին որ չոր ու կրային հողի վրայ տնկուած է՝ իրաւ քիչ բերք կ'ունենայ, բայց պտուղը շատ աւելի համեղ ու յարգի կ'ըլլայ : — Դարձեալ՝ կրնայ դիտած ըլլալ որ գետնի մը գերքն ու կայքը մեծ ազդեցութիւն ունին ծառոց շատարդիւն ըլլալուն վրայ և պտղոց կանխահաս և համեղաճաշակ ըլլալուն վրայ : — Այս համառօտ ըսածներէս այն կ'իմացուի, որ տնկադարմաննութիւնը մեծ գիտութիւն կ'ուղէ, վասն զի բարակ արուեստէ . բուսոց բնութեան և սննդեան վրայ անբաւ գիտելիք կան, և գիտնալու է անոնց ամեն մէկ պիտոյից ժամուն օգնութիւն հասնիլ :

Ուստի ով ճշմարտապէս սիրող է տնկադարմաննութեան, հարկաւոր է գիտնայ նախ՝ թէ կլիմայից ազգեցութիւնը ինչ կերպով է տնկոց վրայ, և պէտք է տեղեակ ըլլայ տարրագիտութեան և բնաբաննութեան սկզբանց : Եւ երկրորդ՝ թէ բուսոց կազմուածքն ու սնանելու կերպը ինչպէս է . ճանշնայ ծառերն ու անոնց տեսակները, և արնեկուելու հողին ու գետնին այլևայլ հանգամանքը . գիտնայ թէ ինչ տեսակ պարարիչ կ'ուղեն, ինչ սկզբամբ և արուեստիւ զանոնք յօտելու է, ինչ եղանակաւ բաղմացունելու և պատուաստելու է, որ կերպով զանոնք հիւանդութենէնէ կամ թշնամիներէ պահպա-

նելու է, և վերջապէս անոնցմէ ելած արդիւնքը ինչպէս շահաւէտ ընելու է:

Ահա ըստ այս երկրորդ կարգի նիւթոց բազմավիպս ալ յաջորդաբար ծառատնկութեան վրայ խօսելու կամք ունի՝ փափաքելով գէթ ըստ մասին լնուլ հայախօս և հայագիր յօժարողաց թախանձանքը: Միայն սա չափը կանխեալ կը զուրցեմք, որ բազմավիպիս սահմանը յոյժ անձուկ ըլլալով, անհնար է որ ծառատնկութեան արուեստին ամեն գաղտնիքը կարենամք լիապէս աւանդել: Գոհ ըլլալու եմք, եթէ կարող ըլլամք յայտնաբանել նորա ճշմարիտ սկզբունքներն և ստոյգ գիտցածնիս, թողով ՚ի բաց այն որ գեռ փորձի և քննութեան կը կարօտի, այն որ տարակուսական է, և այն որ այժմու ծառասիրաց իմանալու կարողութենէն վեր է:

Ծառ.

Ծառ ըսելով կը հասկանամք այն բոյսերն որ փայտային են և մի բուն ունին. կեանգերնին հասարակ բուսոց պէս միամեայ չէ, այլ ընդհակառակն տասը քսան տարի և անկէ ալ յոյժ շատ աւելի կրնան ապրիլ:

Բովանդակ ծառերը երկու մեծ խումբի կրնամք վերածել. նախ՝ անոնք որ ուտելի պտուղ ունին և կը կոչուին պտղատու ծառ, և երկրորդ՝ անոնք որ ուտելի պտուղ չունենալով պիտուական են շինուածոց՝ նաւակերտից՝ և այլ այնչափ անթիւ պիտոյից մարդոյ. որ կը կոչուին նաև վայրի կամ անտառի ծառեր: — Մեր այժմու գլխաւոր նպատակը պտղատու ծառոց վրայ խօսելէ. բայց անտի յառաջ կ'ուզեմք ընդհանուր բուսոց կազմակերպութեան, և աճելուն ու մանանելուն վրայ ճառել:

Ինչպէս կենդանական մարմինք՝ այս պէս և բուսական արարածք իրենց կենաց պահպանութեանը համար ունին աճելու և բազմաւորուելու հարկաւոր գործարանները: — Աճելու համար ունեցած գործարաննին են արմատ, ոստ, աչք, տերեւ: իսկ բազմաւորուելու հա-

մար ունեցած գործարաննին են ծաղիկը, սերմն կամ պտուղը:

Բուսոց պահպանութեանը համար հարկաւոր եղած գործարաններ:

Արմատ: — Արմատ կ'ըսուի բոյսին այն մասը, որ միշտ լցուէ խորշելով կը ձկտի հողի տակ մոնելու: իւր պաշտօնն է տունկը ոտքի վրայ հաստատ կեցունել. բայց ասկէ աւելի՝ բոյսին աճելուն և մնանելուն համար հարկաւոր եղած նիւթերը գետնէն ժողովել:

Բունին վրայ՝ ուրարմատը կը սկզբնաւորի ծռանէ (collet) կ'ըսուի՝ որ բունէն շատ աւելի հաստ և ուռած կ'ըլլայ: Այս ծունկը ծառին վրայ ինչպէս կեդրոն աճման է. վասն զի այն կտորէն սկսեալ ծառը գէպյերկինք կ'աճի կ'երկայնի, անտի ՚ի վայր՝ արմատը գէպ ՚ի խոնարհ կ'աճի կ'երկայնի: կան բոյսեր ու ծառեր՝ ինչպէս են բողկը¹, գազարը², ցախը³, խտալական կաղամաւիը⁴ և այլն, որ իրենց արմատը առանց հերձելու և ճեղաւորելու միաբուն և միակտուր շիտակ ՚ի խոր կ'իշեցունեն: Այս տեսակ ծառերը ուղղաբեր (pivotant) կը կոչուին, և այս տեսակ շիտակ արմատն ալ բնաբնափ (pivot) կը կտուի: իսկ ուրիշ ամեն տունկ և ծառ բնարմատ մը ունենալին զատ՝ նաև նոյնին վրայ կողմնական բազում ծիւղեր կ'արձակեն, որք գարձեալ ամենն առ հասարակ հորիզոնադիր քալուածքով մը գետնի տակէն յառաջ կ'երթան, ու գարձեալ անթուելի տակուիճներ արձակելով գետնին կը տիրեն, ու անտի իրենց ծայրերովը իրենց սննդեան յարմար գտած հիւթերն ու ջուրը կը ծծեն ու կ'երկայնին. անոր համար արմատոց ծայրերը միշտ նոր ու մատղաշ են, և երբեմն մինչև այն աստիճան բարակ ու նըբաթել, զոր բու-

1 Բողկ. տճ. Թաւրէ. գլ. Naret.

2 Գազար. տճ. Հաւած. գլ. Carotte.

3 Ցախ. տճ. Տիւրաբան. գլ. Frène.

4 Կաղամախ իտալական. տճ. Խելվան գալլ. գլ. Peuplier d' Italie.

սարանք ծծինք կամ հաղմլուկ (chevelure) կոչեցին :

Այն արմատները որ մի տարուան մէջ կը ծլին կը ծաղկին կը պտղին և յետ այնորիկ կը չորսան բաւեռ կամ դամեա (anisuel) արմատ կը կոչուին, ինչպիսի են ցորեան, գարի, բամբակ, ոլոռ, բակլայ, և այլ բազումք անթիւ : — Այն արմատները՝ որ երկու տարի ապրելէն ետքը պտուղ կու տան և յետոյ կը մեռնին . Երկամեա (bisannuel) արմատ կ'ըսուին . ինչպէս են ստեղղինը¹, շաղգամը, կաղամբը և այլն : — Այն արմատները որ շատ տարի կ'ապրին, և պտուղ տալէն ետքը կը շարունակեն իրենց կեանքը ամեն տարի յաջորդաբար պտղերով, ասոնք լառահէաց (vivace) արմատ կ'ըսուին . բուսոց մէջ ծներեկը², առուղյոր³, եղիճը⁴, սէզը⁵, եղէգը⁶, շատակեցութեան օրինակ կրնան ըլլալ քեզի, իսկ փայտաւորներէն՝ ամեն վայրի ու պտղատուծառերը, որոնց կեանքը յանսահմանս կը ձգտի :

Տնկագործութեան վրայ խօսած ատեննիս պիտի զրուցենք թէ արմատը ինչ օրինաք յարդարելու է :

Ուղէ (tige) : Ծառի գետնէն դուրս երեցած մասին աճումը՝ հակառակ արմատին աճման՝ դէպ ՚ի վեր է : Բոյսը՝ սկսեալ արմատի բերնէն՝ զոր ծունկ անուանեցինք՝ շիտակ կ'ելլէ մինչե ՚ի վեր կամ մինչե առ մի չափ : Այս շիտակ ելած կտորը հասարակ բառով ուշէլ կ'ըսուի : Սիզային (graminées) խստոց ուղէշը յօլուն կամ ծղութ (chautine) կ'անուանեմք, հասարակ բուսոցը ծեղ, և փայտաւոր ծառոցը բուն :

Բունը քիչ մը տեղ ուղղակի միակտուր բարձրանալէն ետքը կամ կը բաժանի յայլեայլ ճիւղ, կամ թէ չէ՝ կողմնական ճիւղեր կ'արձակէ : Բունը ի-

բրե թէ ծառին սիւնն ու ամրութիւննէ, և որուն վրայ կեցած է ծառին շինուածքը ճիւղերով ոստերով ու տերեներով :

Բունին վրայ առաջիննետուած թեւերը անուանելու ենք ճիւղ կամ բաղուտ (branche). ճիւղին վրայէն ելած նոր թեւերը ռապ (rameau). ոստերուն վրայէն ելած ծայրերը ճեղ (bourgeons). ճեղն ալ երբ դեռ նոր ելած և մատղաշ է բողբոշ :

Ուստի բուսոց աճումը միշտ բողբոշէն կը սկսի, և հիննալով ճեղ՝ ոստ, ճիւղ անունները կ'առնու : Ըսել է որ՝ բողբոջը կամ ճեղը ծառի մը աճման առաջին վիճակն է, որ գարնան ժամանակ աչքէ մը դուրս կը ցցուի, աճելով կ'երկայնի, և մինչե որ նոյն տարուան աճումը դադրի, ճեղ կոչուիլը կը պահէ : Աշնան վերջերը ճեղը իւր աճման ընթացքը կատարած կ'ըլլաց և ոստ անուանած . և այն ատեն կը տեսնուի իր վրայ ամեն մէկ տերևի հետ մի մի աչք, որոնցմէ ՚ի յաջորդ գարնան կ'ելլեն նոր նոր բողբոշներ, որք առջինին պէս կ'երկնան մինչե յաշուն՝ այնուհետեւ ճեղը կը կոչուի ճիւղ, կամ եթէ կարի հաստ է՝ բազուկ :

Ճեղերու և ոստերու վրայ գեռ շատ զուրցելիք ունիմք՝ երբ ատենը դայ ճառել ծառերը յօտելու վրայ :

Եթէ ծառի մը բունը ընդ լայնութիւնը շիտակ կտրենք, հոն երեք գործարան կը տեսնեմք . որ ասոնք են, մէջ տեղի կեդրոնի վրայ ծուծ (moëlle), յետոյ փայտային մարմին (corps ligneux), յետոյ կեղև (écorce) :

Բունին մէջ տեղը վերէն մինչե ՚ի ծունկ՝ ինչպէս նաև ամեն ճիւղերու և ոստերու մէջ ծայրէ ՚ի ծայր փողերակ կայ՝ ճերմակ մնկանման բուրդով մը լեցուն, որ նմանութեամբ ծուծ որ և ուժուկ կ'անուանի : Մատղաշ ծեղերու փողերակը աւելի լայն՝ ու մէջի ծուծն ալ առատ է՝ քան թէ հասարցած փայտերունը . վասն զի ծուծը հիննալով կը պնդանայ, և շրջակայ փայտին հետ կը միաւորի . այնպէս որ կարի ճեղ ու հաս-

1 Սաւեպղին . աճ . հաւած . դղ . Carotte.

2 Ծներեկ . աճ . քուռ գնմառ դղ . Asperge.

3 Առուղյոտ . աճ . Եռեմա . դղ . Trèfle.

4 Եղիճ . աճ . Բացլան . դղ . Ortie.

5 Սէղ . աճ . Ալբու . դղ . Chien-dent.

6 Եղէգ . աճ . Գամլա . դղ . Canne.

տըցած ծառերու փողերակը դրեթէ ձբցած է և հազիւ կը նշմարի:

Ծուծի փողերակէն մինչև 'ի կեղե գտուած միջոցը փայտային մարմին է. բայց մի կարծեր թէ այս փայտային մարմինը խառն 'ի խուռն կեցած է, այլ խաւ 'ի խաւ դրուած վրայէ վրայ՝ ինչպէս թէ բաղում խողովակը մէջէ մէջ անցած ըլլան ու իրարու հետ միաւորած: — ինչպէս եղեր է բացատրենք:

Համարէ թէ նորահաս տունկ մը 'ի գարնան գետնէն բուսնելով մէկ տարուան մէջ հասաւ 'ի գրչի հաստութիւն: Երկրորդ տարին նորէն աճեց և հաստրցաւ. բայց նոր ստացած հաստութիւնքը առջինին վրայ ընդունեցաւ դուրսէն: Այս երկու տարուան հաստութիւնքը իրարու եկան՝ միացան, բայց անխառն մնացին: Երրորդ տարին տունկը գարձեալ աճելով, ետքի առած մարմինը նախընթաց տարուանին վրայ հագաւ, բայց անցած տարուան առածին հետ չփոխեցաւ. անոր հետ նոյնացաւ, բայց կարգով երրորդ ըլլալը նշանագծով մը իմացուց: Այսպէս ամեն տարի փայտային նոր խաւ մը կ'աւելնայ անցեալ տարւոյն խաւին վրայ, և ասանկով ծառը երթարով կը հաստրնայ: Արդ աստի կը հետևունեմք որ եթէ ընդ լայնութիւն կտրած փայտին վրայ տասն կամ քսան կամ երեսուն օղակներ վրայէ վրայ ագուցած գտնեմք, այն ծառն ալ ստուգապէս տասն կամ քսան կամ երեսուն տարեկան եղած կ'ըլլայ: Կտրած ծառին տարիքը ըսած կերպովս կը ճանաչուի:

Եթէ մանրացոյց ապակիով դիտենք ընդ լայնութիւն և ընդ երկայնութիւն կտրած փայտին երեսները, իսկոյն կը համոզուինք՝ որ փայտին ամբողջ զանգուածը ձևացած է անթիւ և անհամար մանր փողակներու քովէ քով գալովք: Այս փողակները ջիկերու և առէջըներու մէջ ինչպէս թէ ցանցի մէջ ժողոված ու իրարու հետ ամրապնդած են:

Փայտային մարմինը գլխաւոր երկու որոշ մաս ունի, այսինքն ճայր դայր (bois parfait). և հիսուֆայր (aubier): Ծուծի

փողերակին շրջակայքը գտուած առաջին խաւերը հիննալով կը սեղմին ու կը պնդանան, որով այն տեղի կտորը տայր դայր կամ հարաբետ դայր կ'անուանի և գոյնով ալ թուխ կ'ըլլայ: Իսկ կեղեկին մօտ եղած խաւերը շատ աւելի մորջ թոյլ կակուզ և բացագոյն ըլլալնուն համար՝ հիսուֆայր կամ ներադայր կը համարուին, որուն գեղջուկ պարտիզապանք իրենց լեզուով դու կ'ըսեն: Թէպէտ և ամեն հաստ փայտի վրայ կը տեսնուի այս երկու զանազանութիւնը, բայց աւելի զգալի է Ամերիկային եկած ծիրանափայտին¹ վրայ, որուն մայր փայտը կարմիր կ'ըլլայ՝ և թերփայտը դեղին. Երենոսի² մայր փայտը սեաւ՝ թերփայտը սպիտակ, ընկուզի մայր փայտը թուխ՝ թերփայտը մայր փայտը թրուն ջի թերփայտը դեղին. խնձորենուոյ և տանձենուոյ մայր փայտը հունապի՝ թերփայտը կինամոն, և այն: Իսկ ճերմակափայտ ծառերը՝ ինչպէս են լորի³ շագանակ⁴ հացի⁵ եղեկին⁶ կաղամախ⁷ և այն, թէպէտ և այս երկու գունոց զանազանութիւնքը չունին, բայց պընդութեան կողմանէ անոնց մայր փայտը շատ աւելի սեղմ⁸ է՝ քան թէ իրենց թերփայտը:

Կեղե (écorce): Փայտային մարմնոյն արտաքին երեսը կեղեւով պատած է ոստերուն վերի ծայրէն սկսեալ մինչև արմատոց յետին ծայրերը. ըսել է՝ ամբողջ ծառը, կեղեսի մէջ առնուած է, և իրգև թէ պատեանի մը մէջ սեղմուած՝ կը պաշտպանուի, ոչ միայն դուրսի օդին ժանտութենէն, հովերէն, ցուրտէն ու շոդէն, այլ և արմատներն ալ գետնի սառնամանկիներէն ու կերչաց հարուածներէն:

Կեղեին վրայ երեք դիտելիք ունիմք,

¹ Ծիրանափայտ. աճ. Խոմ գագամ. գլ. Տապէշ.

² Երենոս. աճ. Աղանօւ. գլ. Եբեն.

³ Լորի. աճ. Օկտանու. գլ. Տիլլեւլ.

⁴ Հագանակ. աճ. Քէուլուկ. գլ. Շհատայն.

⁵ Հացի. աճ. Սէրէգան. գլ. Էրաբլ.

⁶ Եղեկին. աճ. Չոմ. գլ. Սապին.

⁷ Կաղամախ. աճ. Գագամ. գլ. Պէպլիեր.

որ են մաշկը (épiderme), բուն կեղեւ (les couches corticales) և խծիծը (liber) :

Մաշկը (épiderme) կեղեւին դուրսի երեսին վրայ պատած կարծր և փայլուն թաղանթն է, որ զկեղեւը կը պահպանէ օդոց ցասմունքներէն :

Բուռն կեղեւ (les couches corticales), որ փայտին կազմուածքին նման անթիւ և անհամար քովկով եկած փողակներով ձեւացած է :

Խծիծ (liber) Քլամուր, օհլամուր են բարակ շապիկներ կարգ կարգ վրայէ վրայ դրուած, և իրրե ներքնակ՝ փայտային մերկ մարմնոյն վրայ հագուցած անմիջապէս կեղեւին տակէն :

Ինչպէս 'ի վեր անդր փայտային մարմնոյն համար զուրցեցինք՝ թէ ամեն տարի նոր խաւ փայտի յաւելանայ իւր առաջին հաստութեանը վրայ, այսպէս հոս ալ՝ ամեն տարի նոր կարգ մը կ'աւելնայ խծիծի շապիկին վրայ, և ծառին հնանալովը խծիծին հին կարգերը կը պնդանան, և կ'եղեւին հետ միանալով անոր հաստութիւնը կ'աւելցունեն :

Աչք (bouton, չէո՞ւ) : Ծառոց աչքը սովորաբար ոստերուն ծայրը և ամեն տերևներու հետ կը գտուի : Ամեն աչք բարակ և բազմաթեփ պատեանի մէջ պահպանուած է . և սովորաբար տարիի մը չափ ժամանակ անշարժ կենալէն ետքը՝ գարնան ատեն կը շարժի ու կը ցցուի . որ ատեն կը սկսի պառուէ (օշի) կոչուիլ, որմէ ետքը բողբոջ, անկէ ետքն ալ բարունակ կ'ըլլայ . ըսել է որ ծառը մեծցունողը աչքն է : Ծառը 'ի ձեռն աչքի դէպյերկայնութիւն կ'աճի կը բարձրանայ, և 'ի ձեռն փայտային խաւերու դէպ 'ի լայնութիւն կ'աճի ու կը հաստընայ :

Պատուաստի և յօտի վրայ խօսելու ատեննիս՝ աչքի վրայ շատ զուրցելիք ունիմք :

Տերև (feuille) : Ծառի տերևեր՝ ինչպէս ամենուն ծանօթ է՝ ունի երկու մաս՝ չափը, և կանաչագոյն տարածուած թէրթէ, որ ըստ ցեղից և տեսակաց այլ և այլ ձև կ'ունենայ :

Կանթը կամ կոթը տերևեր ծառին հետ միաւորող բունն է, որուն մէջ ծայրէ 'ի ծայր ծակ ունենալով ծուծի փողերակին հետ հաղորդակից է :

Կանթը մինչև տերևերին ծայրը կը հասնի . և տերևերին ետևի կողմէն ճեղաւորուելով՝ անբաւ մանր թևեր կ'արձակէ, և կը գրաւէ բոլոր անոր երեսը եղերքէ եղերք, այն է որ երակ թէրթոյ (les nervures) կը զուրցեմք : Այս անթիւնուրը երակներուն և ամենամանը փողակներու և առէջըներու քովէ քով և տարածուած կենալովը ձեւացած են ծառոց տերևեր :

Տերևներուն կեանքը ժամանակաւոր է . կան՝ որ քանի մը ամիս ծառի վրայ կենալէն ետքը աշունքի ատեն կ'իյնան, կան՝ որ ծառի վրայ կը չորնան ու կը մնան, և չթափին՝ եթէ ոչ 'ի յաջորդ գարնան . իսկ ուրիշներ ալ կան՝ որ ծառի վրայ երկու երեք և այլ աւելի տարի կանանչ կենալէն ետքը կը թափին, ինչպէս են սոճին ¹ նոճը ² տոսախ ³, դափնի, ձիթենի, լեմոն և այլն . այս տեսակ ծառերը որ մէկ քանի տարի տերևնին անկորուստ կը պահեն մշտադալար կ'ըսուին :

1 Սոճի. տճ. Չամ. գլ. Pin, Pinus.

2 Կոճ. տճ. Սլեմ. գլ. Cypress.

3 Տօսախ. տճ. Շիմու. գլ. Buis.